ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն

վարչական շրջանների ընդհանուր

իրավասության դատարանի դատավոր

Ա. Մկրտչյանին

Դիմող՝ թիվ 62210814 քրեական գործով տուժող

Ալեքսանդր Ցվերիանովի ներկայացուցիչ

Արթուր Սաքունց

ԴԻՄՈՒՄԻ ԼՐԱՑՈՒՄ

Ալեքսանդր Ցվերիանովի նկատմամբ ոստիկանության Էրեբունու բաժնի աշխատակիցների կողմից բռնությունների փաստով թիվ 62210414 քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից

1. 2014 թվականի մայիսի 23-ին ՀՀ գլխավոր դատախազության գրություն ՀՔԾ-ի պետին ՀՀ ԱԺ պատգամավոր Նաիրա Զորաբյանի հասցեագրված նամակը Ալ. Ցվերիանովի կողմից:

2. 2014 թվականի մայիսի 29-ի դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին ՀԿԳ քննիչ Զ. Թադևոսյանի կողմից Ալ. Ցվերիանովի վնասվածքների վերաբերյալ:

3. 2014 թվականի հունիսի 4-ին քրեական գործ հարուցելու և վարույթ ընդունելու մասին ՀԿԳ քննիչ Զ. Թադևոսյանի կողմից:

4. 2014 թվականի հունիսի 11-ին ՀՀ ՀՔԾ պետի տեղակալ Մ. Բաբայանի կողմից ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պետ Ա. Կարապետյանին օպ. հետ: Միջոցառումը իրականացնելու խնդրանքով դիմում հետևյալ **Մեկնաբանությունով**
   - **Ալ. Ցվերիանով հայտնած տեղեկությունների իսկությունը ստուգելու ուղղությամբ**
   - **ինչ հանգամանքներով է Ալ. Ցվերիանովը բերման ենթարկվել, խոստովանել և ցույց տվել գողության վայրերը.**
   - **Հայտնաբերել Ալ. Ցվերիանովին և ներկայացնել ՀՔԾ**

5. **2014 թվականի հունիսի 16-ին վկա Քաջիկ Խաչատրյանի հարցաքննությունից՝.**

- հայտնում է ոստիկաններին, որ իր խորդանոցից անվադող չեն գողացել, քանի որ անվադող չի ունեցել:
- Խորդանոցի կողպեքի լեզվակը կոտրված է եղել մեկ ամիս առաջ (մոտ 2012 թվականի նոյեմբերին), չի հայտնել ոստիկաններին լեզվակի կոտրման մասին, քանի որ ոչինչ չի պակասել խորդանոցից:
- Ոստիկաններն ասել են, որ պետք է հաղորդում գրվի, որ կողպեքս կոտրված է եղել բայց ոչինիչ չեն գողացել, հետո տվեցին հաղորդման մի բլանկ, ասեցին որ մենք կասենք ոնց գրես, որից հետո թելադրել են ինձ որ գրեմ, որ անհայտ անձը կոտրել է խորդանոցի կողպեքի լեզվակը, ներս մտել և ոչինչ չի գողացել:
- Ես ցանկություն չեմ ունեցել հաղորդում տալու, բայց որ ոստիկաններն ինձ ասեցին, որ կարգն այդպես է, ես էլ նրանց թելադրանքով գրեցի այդ ամենը:
- Ոստիկանները եկան մեր տուն, ասեցին, որ այդ ձերբակալվածը ասել է, որ այդ խորդանոցից անվադող է գողացել: Ես նրանց ասացի, որ այդպիսի բան չի եղել ու ինձ համար անհասկանալի է, ինչու է այդ ձեռբակալվածը նման բան ասել: Կրկնում եմ, որ մինչ այդ մտածել եմ, որ երեխաներն են այդ լեզվակը կոտրել:
- Մի 5 կամ 6 օր հետո , կոնկրետ օրը չեմ հիշում, կանչեցին Էրեբունու քննչական բաժին, ճանաչվել եմ տուժող:
- Ասեմ, որ այդ տղան ոստիկանների ուղեկցությամբ շղթաներով եկել է մեր բակ, տանը եղել է կինս, նա է տեսել, որ ցույց է տվել մեր խորդանոցը և ասել, որ այդտեղից գողություն է արել:

Մեկնաբանություններ

Քննվել է ամուսինը, որը չի տեսել, բայց չի քննվել կինը, ով տեսել է Ալ. Ցվերիանովին:

Ոստիկանները ստիպել են, որ գրի հաղորդում, չնայած որ ինքը հայտնել է, որ չի եղել գողություն:

Ոստիկաններն ասել են կարգն է այդպես, սակայն չեն, բացատրել, թե ինչու է այդպես սահմանված կարգը:

6. 2014 հունիսի 17-ի վկա Անահիտ Գրիգորյանի հարցաքննությունը, ուսուցչուհի հիմնական թիվ 60 դպրոցում:

- 2012 թվականի նոյեմբերի 30-ին դպրոցի «տնօրենի» միջոցով հրավիրել եմ ոստիկանություն, որպեսզի «թարգմանեմ» այդ տղայի ռուսերենից հայերեն.

«սակայան» այդ օրը «Ալեկսանդրը» չկարողացավ ցուցմունք տալ, քանի որ հարբած էր.

- Որևէ գործողություն այդ օրը չի կատարվել, ինչքան հիշում եմ, այդ մասին քննիչը ինչ որ «փասթաթուխթ» կազմեց, որը ստորագրեցի ես և այդ տղայի «փասթաբանը», որը մի «կինն էր»:
- Հաջորդ օրը նույնպես գնացել եմ Էրեբունու բաժին, որտեղ բերել են նորից այդ տղային, որը արդեն «խմաց չեր»: այդտեղ էր նաև նրա «փասթաբանը»
- Ներկա եմ եղել այդ տղայի հարցաքննությանը և այլ գործողություններին նրա հետ կապված, ստորագրել եմ դրանց «վերյաբերյալ փասթախթերը»:
- Օրվա կեսին ոստիկանների «Ալեկսանդրի» և նրա պաշտպանի հետ մի քանի ժամ Էրեբունու բաժին գնալուց հետո միասին դուրս ենք եկել բաժնից և տարբեր ավտոմեքենաներով շրջել ենք Երևան քաղաքի մի քանի թաղամասերով:
- Քննիչի հարցին՝ Ալ. Ցվերիանովը իր կամքով էր մատնացույց անում իր կողմից կատարած դեպքի վայրերը, թե ոչ, ոստիկանները ինչպես էին վերաբերվում նրան.
- Պատասխան- Ես ոչինչ չեմ կարող հայտնել այդ կապակցությամբ, ոստիկանները «համենայան» դեպս իմ ներկայությամբ այդ տղայի հետ վերաբերում էին շատ «կորրեկտը, արանց ջնշումների», ես չեմ նկատել, որ նրա վրա որևէ ոստիկան «գորա» կամ ստիպի.
- Իմ մեքենայի մեջ նստած ոստիկաններից մեկը ասաց ինձ, որ այդ տղան հերթով ցույց է տալիս, թե որտեղից է գողություններ արել:
- Նշեմ, որ այդ ժամանակ նույնպես ես չեմ տեսել, որ «իրան» ոստիկանները ստիպեն, համոզեն կամ պարտադրեն նրան որ կատարի իրենց ասածը:
- 2013 թվականին ինձ դատարանում հարցաքննել են այդ կապակցությամբ, ես շփոթված և խարնված լինելու արդյունքում ես ասել եմ որ չեմ մասնակցել որպես թարքմանիչ և ստորագրությունները իմը չեն:

Մեկնաբանություն

Վկան ակնհայտ հայերենին չի տիրապետում, հայերենը գրագետ չէ:

Կա ակնհայտ հակասություն նրա և Ալ. Ցվերիանովի ցուցմունքների միջև և քննիչը առերեսում չի արել:

Վկան բազմիցս հայտնել է , որ ստորագրել է ինչ որ փաստաթղթերի տակ, մեքենայից նույնիսկ դուրս չի եկել:

Ոստիկանն է նրան ասել, որ Ալ. Ցվերիանովը ցույց է տալիս գողության տեղերը:

Քննիչը չի պարզել, թե ինչպես կարող էր թարգմանիչը մեքենայում նստած իմանալ, կամ լսել, որ Ալ. Ցվերիանովի նկատմամբ, խոսքային ճնշումներ կամ ստառնալիքներ հնչել են, թե՝ ոչ:

7. 2012 թվականի դեկտեմբերի 12-ին Ալ. Ցվերիանովի կողմից դիմում-բողոք է գրվել ՀՀ ոստիկանության պետին՝ հայերեն լեզվով, ստորագրված է Ալ. Ցվերիանովի կողմից ռուսերեն: Գրությունը մուտք է եղել ոստիկանության ներքին անվտանգության վարչություն 2012 թվականի դեկտեմբերի 14-ին:

Մեկնաբանություն

Ինչ պայմաններում է Ալ. Ցվերիանով գրել այս դիմումը, ում ներայությամբ և ինչպես է դիմումը հասել ՀՀ ոստիկանապետին:

8. ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության ԾՔ բաժնի ՀԿՀ ավագ տեսուչ Արթուր Բդոյանին թույլատրվել է մուտք գործել Նուբարաշեն ՔԿՀ 2012 թվականին դեկտեմբերի 23-ին:

Մեկնաբանություն

9. **2012 թվականի դեկտեմբերի 3-ի ՁՊՎ-ում Ալ. Ցվերիանովին հատկացվել է գլխացավի դեմ «Սպազմալգոն»՝ 2 հատիկ և «Վալերանի-էքստրա» 3 հատ:**

Մեկնաբանություն

Ինչով է պայմանավորված եղել Ալ. Ցվերիանովի մոտ նման առողջական խնդիրների առաջացումը, այս հարցը չի պարզվել:

10. 2014 թվականի 20.06 քննիչ Ավետիսյանը դիմում է Նուբարաշեն ՔԿՀ պետին, պարզելու Ալ. Ցվերիանովի կողմից դիմումը հայերեն գրելու հարցը.

11. 2014 թվականի հունիսի 24-ին քննիչ Ավետիսյանը որոշում է կայացնում դիմել դատարան ծառայողական աշխատասենյակների և ծառայողական ավտոմեքենաների խուզարկություն կատարելու թույլտվության հարցով:

12. Ավելի վաղ 2014 թվականի հունիսի 18-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պետ Ա. Կարապետյանը հայտնում է ՀՔԾ պետի տեղակալ Մ. Բաբայանին, որ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՔՀ բաժնում ոստիկանության Էրեբունու բաժնի ղեկավարության մասնակցությամբ

կազմակերպվել է քննարկում, տրվել են կոնկրետ հանձնարարություններ, վերջինիս հայտնաբերելու և քննությանը ներկայացնելու ուղղությամբ:

13. 2012 թվականի դեկտեմբերի 20-ին տեղեկանքով ՆԱ բաժնի ավագ տեսուչ Բդոյանը Ալ. Ցվերիանովի դիմումի կապակցությամբ ուսումնասիրության արդյունքներով, հայտնում է, որ «Ուսումնասիրություններով Ալ. Ցվերիանովի նկատմամբ բռնություն գործադրելու և ծեծի ենթարկելու հանգամանքները չեն հաստատվել»:

Մեկնաբանություն

Ալ. Ցվերիանովի կողմից ներկայացված դիմումը ուղղված ՀՀ ոստիկանապետին, պետք է մակագրվեր ՀՀ ՀՔԾ, որի իրավասության ներքո է ոստիկանության աշխատակիցների կողմից քաղաքացու նկատմամբ բռնությունների փաստով քննության իրականացումը:

Առնվազն ողջամիտ չէ և անտրամաբանական է 2012 թվականի դեկտեմբերի 20-ից հետո առնվազն մեկուկես տարի հետո ավագ օպեր-լիազոր Արտավազդ և հետախուզության բաժանմունքի պետ Գևորգ Հակոբյանի և բաժանմունքի մյուս աշխատակիցների աշխատասենյակներում, մեքենաներում խուզարկություն անելը, ենթադրելով,որ էլեկտրահարող սարքեր և ռետինե մահակներ կարող են հայտնաբերվել (սա ձեռառնելիք է):

14. 2014 թվականի հունիսի 26-ին Ալ. Ցվերիանովը ճանաչվել է տուժող.

Մեկնաբանություն

Քրեական գործ հարուցելուց միայն 22 օր հետո.

Ալ. Ցվերիանովի կողմից 2012 թ. դեկտեմբերի 12-ից հետո տուժող է ճանաչվում 2014 թվականի հունիսի 26-ին.

ՀՔԾ քնիչը իրավական գնահատական չի տվել ՀՀ ոստիկանապետ Վովա Գասպարյանի, Ներքին Անվտանգության ծառայության պետ Ա. Հակոբյանի և Ոստիկանության մյուս աշխատակիցների գործողություններին, որոնք ունենալով Էրեբունու բաժնի աշխատակիցների կողմից ակնհայտ քրեորեն հետապնդելի գործողությունների մասին տվյալներ և նութեր, չեն ուղարկել չեն ուղարկել ՀՔԾ-ին, կատարել են ինքնիրավչություն, ավելին կոծկել են հանցագործությունը, քանի որ ժամանակին քննություն կատարելու արդյունքում հանցագործության բացահայտման և օբյեկտիվ, բազմակողմանի ու լրիվ քննության հավանականությունն ավելի մեծ կլիներ քան դեպքից 1,5 տարի հետո:

15. Քննիչը որպես թարգմանիչ է ներգրավվում թիվ 62210814 քրեական գործով Վարդուհի Շահինյանին, որը ներկայացրել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2006 թվականի մայիսի 16-ին տրված թիվ 20 տեղեկանքը, որ անցել է նոտարական գործողություններին մասնակցելու որպես թարգմանիչ որակավորման քննություններին ռուսերեն լեզվից և ստացել դրական գնահատական.

Մեկնաբանություն

Քննիչ Ավետիսյանը քննության չի առել և իրավական գնահատականի չի արժանացրել քննիչ Թունյանի կողմից Գրիգորյան Անահիտին որպես թարգմանիչ ներգրավվելու գործողությունը:

16. 2014 թվականի հունիսի 27-ի վկա **Գրիշա Խաչատրյանի** հարցաքննությունը.

- Ոստիկանության էրեբունու բաժնի աշխատակիցներից մեկը, որին դեմքով ճանաչում էի, բայց անունը չգիտեյի, մոտեցավ ինձ և ասաց, որ մի վրացի են բռնել, որը գողություններ է արել տանելու է տեղերը ցույց տա և իրենց ընթերակա է պետք:
- Մոտ 2 տարի առաջ կոնկրետ ժամանակը չեմ հիշում, ես մի օր ցերեկը գտնվում է գործիս տեղում:
- Աշխատում եմ սմենով, երեք օրը մեկ ցերեկները պահակություն եմ անում, իսկ օրվա 2-րդ կեսից ինձ փոխարինում է տղաս Սերգեյը, ով մնում է մինչև առավոտ:
- Ես համաձայնվեցի, քանի որ տղաս արդեն եկել էր հիմնարկ և ես այդտեղից կարող է դուրս գալ, չցանկացա մերժել ոստիկանի խնդրանքը:

Մեկնաբանություն.

Ալ. Յվերիանովն իր ցուցմունքներում հայտնում է, որ իր բնակարան ոստիկանության բաժնի աշխատողները ներխուժել են առավոտյան և տեղափոխել բաժին: Ոստիկանությունը իր փաստաթղթերում արձանագրել է որ բերման է ենթարկել 2012թ. նոյեմբերի 30-ին 16.30-ին: Վկա Գ.Խաչատրյանի ցուցմունքում նշված ժամերը վկայում են, որ առնվազն կեսօրին է ոստիկանը մոտեցել իրեն որպես ընթերակա ներգրավելու հարցով:

Այսինքն, Ալ. Յվերիանովը ոստիկանությունում գտնվել է մինչև 16:30-ը

Քննիչ Ավետիսյանը ոստիկանության կողմից կատարված կեղծիքին ուշադրություն չի դարձրել և գիտակցաբար թաքցրել է հանցագործությունը.

Գրիշա Խաչատրյանի որդուն /Սերգեյին/ քննիչը հարցաքննել է թե ոչ, և ինչու չի հարցաքննել, քանի որ այն կարող էր կարող նշանակություն ունենալ ժամը ճշտելու հանգամանքի վերաբերյալ: Քննիչը շատ մեծ ջանադրություն է ցուցաբերում Ալ. Ցվերիանովի կողմից հայերեն իմանալ-չիմանալը ճշտելու հարցում, և ոչ թե ոստիկանների ապօրինի գործողությունները բացահայտելու

- Ոստիկանները եկան մի կնոջ հետ, որին նույնպես կանչել էին, որ իմ նման մասնակցի տեղազննությանը: Անունը հիշում եմ՝ Էմմա էր, քանի որ այդ օրն ամբողջ ճանապարհին իրար հետ խոսել ենք:
- Նստեցինք ոստիկաններից մեկի ժիգուլի ավտոմեքենայի մեջ, մեզ հետ նստեցին 2 ոստիկանության աշխատակիցներ, իսկ ուրիշ կին մեր մեքենայի մեջ չի եղել:
- Բռնված գողին նստեցրին մյուս ավտոմեքենայի մեջ, որն էլի ժիգուլի էր, որտեղ նստեցին նաև քննիչը, օպերը, իսկ թե ուրիշ ովքեր են եղել չեն հիշում:
- Չեմ կարող ասել, մեզ հետ փաստաբան կին թե թարգմանչուհի եղել է թե ոչ, բայց նրանք հաստատ մեր մեքենայի մեջ չեն եղել, եթե լինեին կհիշեի: Մեր մեքենայի մեջ եղել ենք ես, մյուս ընթերական և 2 օպերներ, որոնց չեմ հիշում:
- Բաժնից ձեռնաշղթաներով դուրս բերեցին Ալ. Ցվերիանովին:

Մեկնաբանություն:

Վկան հայտնում, որ մեկ անգամ է տեսել Ալ. Ցվերիանովին ու հիշում է անուն ազգանունով, բայց քրեականի աշխատողներից մեկին դեմպքով ճանաչում է բայց անունը չգիտի: Ինչպես է լինում որ անձին հիշում է մեկ անգամ տեսնելով հիշում է անուն ազգանունով, իսկ այն անձին ում բազմիցս տեսել է և ճանաչում է դեպքով, բայց անունը չի հիշում: Սա կարող է լինել միայն այն դեպքում երբ քննիչը թելադրի, հուշի վկային անուն ազգանունը:

- Ես և մյուս ընթերական շատ մոտիկ չէինք գնում, բայց տեսնում էինք, որ Ալ. Ցվերիանովը ինքն է ձեռքով ցույց տալիս այն գառաժները, պադվալներն ու չեռդակները, որտեղից գողություններ է արել:

Մեկնաբանություն:

Եթե մոտիկ չէին գնում ինչպես կարող է ընթերական համոզված լինելով որ Ալ. Ցվերիանովին ոստիկանները խոսքով չեն սպառնում կամ հուշում ցույց տալ, կամ արդյոք նրանց հուշելը կարող էր ընթերական լսել հեռավորության վրա: Եվ նման

դեպքում քննիչը առերեսում չի կազմակերպում ընթերակայի և Ալ. Ցվերիանովի միջև, ինչպես նաև Ալ. Ցվերիանովի և թարգմանչուհու միջև ու այդքանից հետո քննիչը հիմնավոր է համարում, որ

- Քննչական գործողության ամբողջ ընթացքում մեր ներկայությամբ քննիչը կամ քրեականի օպեր-լիազորները դեպքի վայրերը ցույց տվող Ալ. Ցվերիանովի նկատմամբ կոպիտ չեն վերաբերվել, նրան չեն հարվածել չեն ստիպել կամ համոզել, որ ցույց տա այն տեղերը, որտեղից գողություններ է կատարել:

Մեկնաբանություն:

Ընթերական Ալ. Ցվերիանովի հետ նույն մեքենայում չի գտնվել և նա չէր կարող լսել, որ ասենք մեքենայում գտնվելու ընթացքում օպերները սպառնում են Ալ. Ցվերիանովին կամ ճնշում են նրան, կամ ցույց են տալիս որ կողմ գնա, թե ոչ: Քննիչը զարմանալիորեն չի նկատում այս ակնհայտ հակասությունը և կարծում եմ գիտակցաբար:

- Ալ. Ցվերիանովի մոտ այդ ժամանակ խմածության նշաներ չեմ նկատել, նրա վրա կապտած տեղեր, վնասվածքներ մարմանկան վնասվածքներ, քերծվածքներ ոչ մի բան չեմ նկատել

Մեկնաբանություն:

Ալ. Ցվերիանովը իր բացատրություններում և հարցաքննության ժամանակ չի ասել, որ դեմքին, ձեռքերին կամ տեսանելի այլ տեղերում են խփել և ակնհայտ է, որ նման ձևակերպումները ընթերական ներկայացնում է քննիչի ուղղորդմամբ և այն տպավորությունը ստեղծելու, որ Ալ. Ցվերիանովը չի ենթարկվել բռնության, բայց տվյալ նկարագրությունները և Ալ. Ցվերիանովի ներկայացրած նկարագրությունները միմյանց հետ որևէ առնչություն չունեն:

- Երբ ավարտեցինք տեղերը ցույց տալը և վերադարձանք ոստիկանություն արդեն մութն ընկել էր:

Մեկնաբանություն:

Քննիչը չի պարզում և չի էլ ուզում պարզել, թե մութն ընկնելը ժամը քանիսին է, չնայած կարող է կոնկրետ նշել, թե դեկտեմբերի 1-ին օրվա որ ժամին է մթնում և ըստ դրա նաև ստուգել ժամերը:

- Ոստիկանությունում քննիչը բարձր կարդաց իր գրածը և ես և մյուս ընթերական ստորագրեցինք այդ փաստաթուղթը և հեռացանք:

- Ալ. Ցվերիանովը մեր ներկայությամբ չի դժգոհել և չի ասել, որ ինքն անմեղ է և իրեն ստիպել են, որ ասի գողություններ է արել:

Մեկնաբանություն

Շատ զարմանալի կլիներ երբ Ալ. Ցվերիանովը գտնվելով ոստիկանության հսկողության տակ, նամանավադ, որ իր նախկին բողոքը մնացել էր անհետևանք, ընթերականերին բողոքեր, որ իրեն ստիպում կամ ճնշում են:

Քննիչի հարցին հաճախ եք որպես ընթերակա մասնակցում քննչական գործողություններին, վկան պատասխանում է, որ այս տարիների ընթացքում 2 կամ 3 անգամ հազիվ կանչած լինեն (3 տարի է աշխատում, որպես դռնապան):

Քննիչը ստուգել է արդյոք վկայի տրված պատասխանի իսկությունը, մասնավորապես հարցում կատարելով 2009-2012 թվականների ընթացքում նրան որպես ընթերական ներգրավվելու հաճախականությունը պարզելու վերաբերյալ:

- Իմ ներկայությամբ որևէ խոսակցություն չեմ լսել օպերներից կամ Ալ. Ցվերիանովից, որ իրան ծեծել են կամ որ նա անմեղ է:

17. 2014 թվականի հուլիսի 1 վկա **Կարեն Մինասյանի** հարցաքննությունը:

- Երևանի ոստիկանության Էրեբունու բաժնում ոչ մի անգամ չեմ եղել, այնտեղ ծանոթ չունեմ, Ալեքսանդր Ցվերիանովին չեմ ճանաչում:
- Ալեքսանդր Ցվերիանովի անձնական խուզարկությանը ներկա չեմ եղել, ոչ մի խուզարկության արձանագրություն չեմ ստորագրել:
- Քննիչի հարցին 30.11.2012 թվականին կազմված Ալ. Ցվերիանովի անձնական խուզարկության արձանագրության պատճեում, որպես ընթերակա նշված է Ձեր անուն ազգանուն Հայրանունը, Ձեզ է պատկանում ստորագրությունը, թե ոչ: Նման խուզարկության չեմ մասնակցել, նման փաստաթղթում իմ ստորագրությունը առկա չէ:

18. 2014 թվականի հուլիսի 1 վկա **Արմեն Մկրչյանի** հարցաքննությունը, ոստիկանության ավագ օպեր-լիազոր
    - 2012 թվականի նոյեմբերի 30-ին օրվա 2-րդ կեսին, կոնկրետ ժամը չեմ հիշում, բաժնի ղեկավարությանը տեղյակ պահելով այդ մասին, իմ ավտեմեքեայով Մերսեդես 190 մակնիշի 08ՏՕ004 մուգ կապույտ ավտոմեքենայով գնացինք և իր վարձակալած բնակարանից ոստիկանություն բերման ենթարկեցինք Ալ. Ցվերիանովին:

- Նրա սենյակ մտել ենք դռնից, որը թակեցինք, բայց ներսից ոչ ոք չպատասխանեց, ապա դուռը հրեցինք և այն բացվեց, ներս մտանք և տեսանք, որ Ալ. Ցվերիանովը մահճակալին հագուստներով քնած է:
- Բացատրությունը վերցնելուց հետո Ալ. Ցվերիանովի վերաբերյալ կազմվածշ նյութերը ուղարկել ենք քննչական բաժին
- Խմածության պատճառով քննիչը նրանից այդ օրը ցուցմունք չեր վերցրել

Հարց. Ինչպես է հրանավոր եղել, որ բացատրություն վերցնելու ժամանակ անձը խմած չի լինում, իսկ իրենցինց հետո քննիչի մոտ արդեն խմած է լինում և քննիչը հրանավոր չի համարում գործողություն կատարել: Ժամանակի ընթացքում խմածությունը պետք է գնալով վերանար, ոչ թե ավելանար: Իրավական գնահատական չի տրվել ոստիկանության քրեական բաժնի աշխատողների գործողություններին և այն, որ օպեր -լիազորը գտնում է ,որ Ալ. Ցվերիանովը եղել է խմած բերման ենթարկելու ժամանակ, ակնհայտ հակասության մեջ է, թե իրենց կողմից կատարված քննչական գործողությունների կատարման ժամանակ Ալ. Ցվերիանովի գիտակից վիճակում լինելու և հետո քննիչի մոտ խմած լինելու փաստի հետ:

- Քննիչ Թունյանի Պրեորա ավտոմեքենայի մեջ նստել են քննիչը, Ալ. Ցվերիանովը, օպեր-լիազոր Արմանի ուղեկցությամբ,
- իմ մեքենայի մեջ եղել ենք ես, երկու ընթերակաները,
- Արտոն վարել է մեր քրեական հետախուզության պետական Սամանդ մակնիշի ավտոմեքենան,
- չեմ հիշում և չեմ կարող ասել պաշտպանն ու թարգմանիչը քննիչի, թե Արտոյի մեքենայի մեջ են եղել.

Մեկնաբանություն

Օպեր լիազորի տված ցուցմունքի և ընթերակա Գրիշա Խաչատրյանի ցուցմունքի մեջ ակնհայտ հակասություններ կան, թե մեքենաների քանակի, թե մակնիշների և թե անձանց մեքենաներում տեղաբաշխման միջև: Ինչու առերեսում չի կատարվում ընթերակայի և օպեր- լիազորի միջև:

- Նոր Նորքի ճանապարհին քննիչի ավտոմեքնայի անվադողը ծակվեց, ստիպված Ալ. Ցվերիանովը և Արմանը տեղափոխվեցին իմ մեքենայի մեջ և ես եմ նրանց Էրեբունու բաժին հետ բերել,
- ընթերակ Գրիշա Խաչատրյանը չի հայտնում, որ ինքը տեղափոխվել է այլ մեքենա, կամ իրենց մեքենայում տեղափոխվել է Ալ. Ցվերիանովը:

Մեկնաբանություն

Այստեղ կա 2-րդ կարևոր հակասությունը, վկաների ցուցմունքների միջև, որի պարզաբանման նպատակով նույնպես առերեսում չի արվել:

- Հիշում եմ, որ խուզարկությանը ներկա գտնվելու համար հրավիրված ընթերակաները իրար ծանոթ էին, բայց թե ինչ կապ ունեին իրար հետ չգիտեմ, այնպես որ չեմ զարմանա, եթե պարզվի, որ մյուս ընթերական էլ է իր տվյալները խաբել:

Մեկնաբանություն

Օպեր -լիազորն իմանալով , որ ընթերականերից մեկը կեղծ է, հորինում է վարկած, որ մյուս ընթերական նունպես կեղծ է:

19. 2014 թվականի հունիսի 1-ի վկա Մամիկոն Հակոբյանի հարցաքննություն (ոստիկանություն ՔՀԳՄ ավագ օպեր-լիազոր, կապիտան)

- քրեական հետախուզության բաժնի պետի բացահայտման գծով տեղակալը տեղյակ չի, թե ընթերականեր ներգրավվել են արդյոք, թե անձնական խուզարկության և թե իր ենթակաների կողմից այլ գործողությունների ժամանակ, միայն գիտի, որ բացատրություն վերցրել են, բայց ներկա է եղել թարգմանիչ թե, ոչ չգիտի:
- <u>Ալ. Ցվերիանովին հերթապահ մաս չենք տարել, քանի որ դրա կարիքը չկար,</u>

Մեկնաբանություն

Չի ներկայացվում, թե ինչ հիմնավորմամբ դրա կարիքը չկար, քանիչն էլ իր հերթին չի ճշտում, թե ինչու կարիքը չկար և չի անդրադառնում այն հարցին, թե ինքը առանց անձի ներկայության օպեր -լիազորի խոսքով հերթապահ մասը գրանցում է անձի տվյալները:

Իրավունքների ծանոթացման վերաբերյալ արձանագրության տակ Ալ. Ցվերիանովը ստորագրում է չիմանալով, թե ինչ թղթի տակ է ստարագրում, այդ հարցին նույնպես քննիչը ճշտում չի կատարում կամ ճշտող հարց չի տալիս:

20. 2014 թվականի օգոստոսի 1-ի **Արտավազդ Պետրոսյանի** հարցաքննությունը (Էրեբունու բաժնի ավագ օպեր լիազոր, ոստիկանության մայոր)

- 2012 թվականի նոյեմբերին օպերատիվ տեղեկություններ է ստացել, որ Ալ. Ցվերիանովը նույն թաղամասի 27-րդ փողոցի 1-ին տնից, ինչպես նաև մի շարք այլ տներից և նկուղներից գողություններ է կատարել ՀՔԾ քննիչը չի պարզել այդ ինչ օպերատիվ տեղեկություններ են և որքանով են այդ

տեղեկությունները համապատասխանում վկայի ցուցմունքներին և քանի գողությունների մասին է եղել օպերատիվ տեղեկությունը,

- Բաժնի ղեկավարությանը տեղյակ պահելո այդ մասին ես ու արմեն մկրտչյանը 2012 թվականի նոյեմբերի 30-ին օրվա երկրորդ կեսին, կոնկրետ ժամը չեմ հիշում, Արմենի Մերսեդես մակնիշի մեքենայով գնացինք և իր վարձակալած տան սենյակից Էրեբունու բաժին բերման ենթարկեցինք Ալ. Ցվերիանովին:

Հարց. Բաժնի ղեկավարություն ասելով կոնկրետ ում ի նկատի ունի:

Նոյեմբերին, կոնկրետ որ օրն են այդ օպերատիվ տեղեկությունները ստացվել և ինչպես են ստուգվել դրանց համաստիությունը:

Բաժնի ղեկավարությունը տեղյակ է պահվել բերման ենթարկելու թե օպերատիվ տեղեկությունների մասին: Ինչու հենց նոյեմբերի 30-ին և ոչ թե օպերատիվ տեղեկությունները ստանալու ոչը և ինչու օրվա 2-րդ կեսին և ոչ թե վաղ առավոտյան, քանի որ վաղ առավոտյան ավելի հավանական է որ անձը կգտնվի տանը քն օրվա 2-րդ կեսին:

- Ապա դուռը հրեցինք այն բացվեց, ներս մտանք և տեսանք, որ Ալ. Ցվերիանովը մահճակալին քնած է, իսկ սենյակը թափթփված տեսք ուներ, սեղանին կային օղու շշեր, ուտելիքի մնացորդներ:

Մեկնաբանություն

Ինչ է նշանակում հրել, կամ ինչու էիք համոզված, որ Ալ. Ցվերիանովը տանն է, և ինչ իրավունքով են ներս մտել տուն: Իրավական գնահատական չի տրվել ոստիկանության գործողություններին:

- Տանտիրոջը նախապես չենք կանչել, չէր բացառվում, որ տանտերը կարող էր այնպես անել, որ Ալ. Ցվերիանովը դիմեր փախուստի:

Մեկնաբանություն

Օպեր -լիազորը պետք է առնվազն հիմքեր ունենար կասկածելու, որ տանտերը կամ Ալ. Ցվերիանովի հանցակիցն է կամ շահագրգռված է Ալ. Ցվերիանովի կողմից կատարված հանցագործությունը կոծկելու մեջ, բայց որևէ օպերատիվ աշխատանք այդ ուղղությամբ չի արվել: Նման դեպքում ինչքանով է վստահելի այսպես կոչված օպերատիվ տեղեկությունները Ալ. Ցվերիանովի վերաբերյալ:

Այս հարցերին քննիչը ուշադրություն չի դարձրել, այսինքն առկա է Ալ. Ցվերիանովի նկատմամբ կողմնակալ վերաբերմունք:

- Վրայից օղու հոտ էր գալիս, բայց այն աստիճան հարբած չէր, որ չկարողանար իրեն տիրապետել:

Մեկնաբանություն

Սա ակնհայտ հակասության մեջ է գտնվում մյուս վկայի՝ Ա. Մկրտչյանի ցուցմունքի հետ, հարբած լինելու մասին, նաև այն ցուցմունքների հետ, որ Ալ. Ցվերիանովը քննիչի մոտ գտնվելու ժամանակ այնքան հարբած էր, որ քաննիչը չի կարողացել հարցաքննություն կատարել, այսինքն ոստիկանության հսկողության տակ գտնվելու ընթացքում Ալ. Ցվերիանովը կորցրել է իրեն տիրապետելու կարողությունը, որի պատճառների պարզաբանման ուղղությամբ ՀՔԾ քննիչը ակնհայտորեն անգործություն է ցուցաբերել:

- Նա առանց առարկելու, դիմադրությունն ցուցյ տալու կամ փախուստի փորձ կատարելու համաձայնեց մեզ հետ գալ:

Մեկնաբանություն

Նույն օպերը հայտնում է, որ որպեսզի հանկարծ փասխուստի չդիմի Ալ. Ցվերիանովի դեռքին ձեռնաշղթա անցկացրեցի: Օպերն ակնհայտ ապօրինություն է թույլ տալիս առանց որևէ հիմքի (ինքն է նշում որ Ալ. Ցվերիանովը չի դիմադրում է փասխուստի փորձ չի կատարում) ձեռնաշղթա է անցկացրել:

Եվ այդ հանգամանքը վկայում է օպեր լիազորի ակնհայտ սուբյեկտիվ վերաբերմունքի մասին, որը վերստին հաշվի չի առնվել քննիչի կողմից, որ ի սկզբանե Ալ. Ցվերիանովի նկատմամբ կատարվել են ապօրինի գործողություններ, որոնք նպատակ են ունեցել ճնշել նրան:

- Չեմ հիշում նա կոշիկներով էր քնած թե ոչ, բայց հագին սպորտային կոշիկներ էին:
- Մյուս օպերը հայտնում էր, որ Ալ. Ցվերիանովը կոշիկներ չուներ և հագել էր սպորտային կոշիկներ:
- Ալ. Ցվերիանովի անձական տվյալները հայտնել է հերթապահ մասին, որպեսզի բերման ենթարկված անձանց մատյանում համապատասխան գրառում կատարվի:

Մեկնաբանություն

Այս մասին նշում է նաև մյուս օպեր լիազորը, այսպիսով Ալ. Ցվերիանովը բաժին բերվելուց հետ սկզբում գտնվել է օպերի սենյակում և ոչ, թե հերթապահ բաժնում և նրա վերաբերյալ տվյալենը հերթապահ բաժնին ներկայացրել են օպերները և հարկ են համարել, իսկ հերթապահ բաժնում գրանցվել է այն ժամը, որը ներկայացվել է

օպեր-լիազորների կողմից, այսինքն չի արձանագրվել Ալ. Ցվերիանովի ոստիկանության բաժին բրվելու իրական ժամը, որը հնարավոր կլիներ գրանցել սկզբում հերթապահ բաժին ներկայացվելուց հետո միայն օպեր-լիազորների սենյակ տեղափոխվելուց հետո:

Քրեականի պետի հանձնարարությամբ ընթերակա հրավիրվել է, Արմեն Մկրտչյանը իր ցուցմունքում հայտնում է, որ ՔՀԲ-ի իմ գործընկերներին խնդրել եմ ոստիկանության բաժին 2 ընթերակա հրավիրել.

Տեսնում ենք, որ 2 վկաների ցուցմունքները հակասում են և չի համապատասխանում միմյանց և քննիչը այս ակնհայտ հակասությանը ուշադրություն չի դարձրել և առերեսում չի կատարել:

- ՔՀԲ-ի պետին խնդրել եմ, որ կազմակերպի ռուսերեն թարգմանիչ կանչելը, որ նրա ներկայությամբ բացատրություն վերցնեմ Ալ. Ցվերիանովից և նյութերը ուղարկեմ քրեական բաժին,

Մեկնաբանություն:

1. Արմեն Մկրտչյանը հայնտում է իր ցուցմունքում, որ ոստիկանության բաժնի աշխատկիցներից ինչ որ մեկը դպրոցից կանչես մի ուսուցչուհու որպեսզի Արտոն Ալ. Ցվերիանովից բացատրություն վերցնի, քանի որ Ալ. Ցվերիանովն ասում էր, որ հայերեն լավ չի կարդում: Քննիչը բացարձակապես ուշադրություն չի դարձնում այն հանգամանքին, որ Ալ. Ցվերիանովը ստորագրել է իր իրավունքների ծանոթացման արձանագրության տակ, որը հայերեն լեզվով է, սակայն նա հայերեն լավ չի կարդում:

2. Ակնհայտ հակասություն կա Արմեն Մկրտչյանի և Արտավազդ Պետրոսյանի ցուցմունքների միջև ռուսերեն թարգմանչի հրավիրման վերաբերյալ և այդ հակսությանը վերստին ուշադրություն չի դարձնում քննիչը, չնայած կարևորում է արդյոք Ալ. Ցվերիանովի ինքն է գրել դիմում-բողոքը ուղղված ՀՀ ոստիկանության պետին, թե՝ ոչ:

- Ալ. Ցվերիանովն ասաց, որ սեռական թեթև վարակ ունի, բայց բուժօգնության կարիք չի ունեցել:

Մեկնաբանություն

Ալ. Ցվերիանովը հայտնում էիր առողջական խնդրի մասին, ինչպես նաև, որ դրա հետ կապված նա դիմելու է զուգարանից օգտվելու խնդրանով և վերստին ոստիկանը չի կատարել անհրաժեշտ գործողություն Ալ. Ցվերիանովի առողջական վիճակի վերաբերյալ չի կանչվել բժիշկ, որպեսզի պարզվի արդյոք Ալ. Ցվերիանովը կարող է

նման վիճակում ցուցմունքներ տալ, թե՝ ոչ: Ի դեպ Ալ. Ցվերիանովը ՀՊՎ-ում իր ցուցմունքներում խոսում է այդ սեռավարակի հետևանքով իր մոտ առկա ցավերի մասին: Արդյոք այդ կարճ ժամանակահատվածում նրա հիվանդությունը կարող էր սրնթաց արագանալ և ցավեր առաջացնել: Սա նույնպես անուշադրության է մատնվել ՀՔԾ քննիչի կողմից:

- Արտավազդ Պետրոսյանը հայտնում է, որ ճիշտ է Ալ. Ցվերիանովը ալկոհոլի ազդեցության տակ էր, բայց գիտակցում էր, թե ինչ է հայտնում, դրա համար էլ ես բացատրություն եմ վերցրել և համոզված եմ եղել, որ նրա խմածությունը չի խանգարում, որ նա հայտնի իրականությունը:

Մեկնաբանություն:

Քննիչը բացարձակ ուշադրություն չի դարձնում այն հանգամանքին, որ ոստիկանը իրեն վերագրում է բժշկական մասնագերի հատկանիշներ, ով միայն կարող է գնահատել, թե խմածության որ աստիճանում է գտնվել Ալ. Ցվերիանովը և այդ մակարդակում Ալ. Ցվերիանովը կարող էր արդյոք գիտակցել իր խոսքերի և գործողությունների նշանակությունը: Ավելին, Ալ. Ցվերիանովը գտնվել է վախի ազդեցության տակ, ինչպես հայտնում է Ա. Պետրոսյանը, թե արդյոք իրեն կձերբակալեն, թե՝ ոչ: Միևնույն ժամանակ նույն Արտավազ Պետրոսյանը հայտնում է, որ քննիչ Թունյանը Ալ. Ցվերիանովին ձերբակալեց, բայց մեզ հայտնեց, որ քանի որ նա գտնվում է ալկոհոլի ազդեցության տակ այդ օրը նրան չի հարցաքննելու: Մեզ ուղեգիր տվեց, որ տանենք Ալ. Ցվերիանովի խմածության աստիճանը ստուգելու: Նախ քննիչը կասկածներ է ունեցել այն մասին, որ Ցվերիանովը գտվում է ալկոհոլի ազդեցության տակ, որ կարող է չգիտակցի իր խոսքերի նշանակությունը: Սա ակնհայտ հակասության մեջ է գտնվում օպեր-լիազոր Ա. Պետրոսյանի կողմից տրված բացատրություն վերցնելու հիմնավորվածության հետ: Այս հարցին քննիչը ընդհանրապես գնահատական չի տալիս և չի գնահատում հակասությունը: Օպեր լիազորը հայտնում է, որ չի ցանկանցել ֆիզիկական բռնություն կիրառել Ալ. Ցվերիանովի նկատմամբ, որպեսզի նրան ենթարկի բժշկական զննության, քննիչի ուղեգրի համապատասխան: Ըստ էության օպեր լիազորը չի կատարել քննիչի հրահանգը, մի դեպքում երբ Ալ. Ցվերիանովին բերման են ենթարկում բաժին, ձեռնաշղթա է կրառվում, չունենալով համապատասխան հիմքը, իսկ մյուս դեպքում ունենալով համապատասխան հիմքը չի ցանկանում ուժ կիրառել: Արդյոք օպեր- լիազորը Ալ. Ցվերիանովին խմածության աստիճանը որոշելու համար չտանելով զննության չի փորձել կոծկել այն փաստը, որ Ալ. Ցվերիանովին ոստիկանության բաժնում ալկոհոլ են հյուրասիրել, որովհետև բժշկական զննության ենթարկելու դեպքում կվորոշվեր ոչ միան խմածության աստիճանը, այլև խմածության վաղեմություն:

ՀՔԾ քննիչը գիտակցաբար այս հարցերը շրջանցում է և մատնում է անուշադրության:

- Թե ով որ մեքենայի մեջ է նստած եղել չեմ հիշում, միայն հիշում եմ, որ Ալ. Ցվերիանովը ում ձեռնաշղթայով ուղեկցում էր Արման Մարգարյանը (անչափահասների գործերով բաժանմունքի օպեր լիազոր) նստած են եղել քննիչի ավտոմեքենայի մեջ:

Մեկնաբանություն:

Արտավազդ Պետրոսյանը իր ցուցմունքում չի հիաշատակում դեկտեմբերի 1-ին բաժին վերադառնալու ճանապարհին քննիչի ավտոմեքենայի անվադաղի ծակվելու և Ալ. Ցվերիանովին քննիչի մեքենայից Արմեն Մկրտչյանի ավտոմեքենա տեղափոխելու և այդ մեքենայով բաժին հասցնելու հարցին: ՀՔԾ քննիչը նույնպես չի անդրադառնում այդ հարցին, բայց զարմանալիորեն Ա. Պետրոսյանը իր ցուցմունքում անդրադառնում է այն հարցին, թե ինչու է Արման Մարգարյանը այդ օրը ներգրավվել քննչական գործողություններին, այս հարցը ես եմ բարձրացրել Ալ. Ցվերիանովի հարցաքննություններից մեկի ժամանակ, քանի որ դա ընկալվել էր Ալ. Ցվերիանովի կողմից որպես ստաժոր և միայն ՀՔԾ-ի քննիչին հուշելու արդյունքում կարող էր Ա. Պետրոսյանը իր ցուցմունքում անդրադառնալ այս հարցին, քանի որ նման հարց ուղղակիորեն չի առաջադրվել Ա. Պետրոսյանի հարցաքննության ժամանակ, բայց զարմանալիորեն ՀՔԾ-ի քննիչը առանձնահատուկ հոգատարությամբ վերաբերում է ոստիկանության գործողությունները օրինական դաշտում տեսնելու կամ նրանց օրինականության հիմնավորվածությունը ստանալու ուղղությամբ, բայց հետևողականություն չի դրսևորում ոստիկանների ապօրինությունները բացահայտելու ուղղությամբ:

Արտավազգ Պետրոսյանը հիմնավորում է, որ 2 օպեր լիազորը քիչ են քննչական այդ գործողությունները կատարելու համար և այդ պատճառով է Ա. Մարգարյանը ներգրավվել պետք է ենթադրել, որ մտավախություն ունեն որ Ալ. Ալ. Ցվերիանովը կարող է փախուստի դիմել, որը ենթադրում է, որ անընդհատ ուշադրության կենտրոնում պետք է պահելԱլ. Ցվերիանովի գտնվելու վայրը և նրա հետ կապված ցանկացած գործողյթուն պետք է գտնվեր նրա ուշադրության կենտրոնում, բայց բացարձակապես տեղեկություններ չի հայտնում կամ չի տիրապետում տեղեկությունների, որ բաժին վերադառնալու ժամանակ Ալ. Ցվերիանովը տեղափոխվել է քննիչի մեքենայից Ա. Մկտչյանի ավտոմեքենան, այսինքն Ա. Պետրոյսանի ցուցմունքներում բացակայում է և տրամաբանությունը և որևէ հիմնավորվածությունը և ակնհայտ է, որ նա կոծկում է ճշմարտությունը և

խուսափում է ճիշտ ցուցմունք տալուց հետևաբար նրա ցուցմունքները չեն կարող լինել արժանահավատ:

20. 2014 թվականի օգոստոսի 2-ին Արման Մարգարյանի՝ անչափահասների գործերով օպեր լիազոր, ոստիկանության ավագ լեյտենանտի հարցաքննություն
Հայտնում է, որ ինքը Ալ. Ցվերիանովի հետ նստած են եղել Թունյանի մեքենայի հետևի նստատեղի և «ողջ փորձարարության ընթացքում մենք եղել ենք երեքով, այլ անձ մեզ հետ չի եղել»

Մեկնաբանություն:

Ալ. Ցվերիանովը փորձարարության ընթացքում գտնվել է քննիչի և օպեր-լիազորի անմիջական հսկողության տակ և զրկված է եղել փաստաբանի իրավունքից և քննիչի և օպերլ-իազորի կողմից հնարավոր ճնշումներից և սպառնալիքներից զերծ մնալու հնարավորությունից.

21. 2014թ. օգոստոսի 8-ին Երևան քաղաքի վարչության ՁՊՎ պետի ժ/պ ոստիկանության փոխգնդապետ Ա. Մկրտչյանի պատասխան գրությունը ՀՔԾ ՀԿԳ ավագ քննիչ Վ. Ավետիսյանին, գրության մեջ ասվում է. Ալ. Ցվերիանովը ձերբակալվել է 30.11.2012թ. ժամը 16.00-ին և ՁՊՎ է բերվել 30.11.2012թ. ժամը 23.35 – ին

Մեկնաբանություն

7 ժամ 30 րոպե ձերբակալված վիճակում անձը գտնվել է ոստիկանության բաժնում, այլ ոչ թե ՁՊՎ-ում, այս հարցին վարույթն իրականացնող մարմինը իրավական գնահատական չի տվել:

22. 02.12.2012թ. ժամը 20.50-ին Ալ. Ցվերիանովը ունեցել է գանգատներ, որի համար կանչվել է շտապօգնության խումբ, որն էլ ցուցաբերել է բժշկական օգնություն: Արձանագրվել է բողոք սեռական օրգանների ցավից և ոռածությունից, որը ըստ վերջինիս սկսվել է 10 օր առաջ: Նշանակվել է համապատասխան դեղեր, ֆիքսելով ցավերի առկայությունը:

23. 2014թ. օգոստոսի 13-ին վկա Էմմա Բեգլարյանի հարցաքննությունը (2-րդ ընթերական է, ով մասնակցել է տեղազննությանը)

- Դեպքի վայր մեկնեցինք 3 ավտոմեքենաներով, քանի հոգով չեմ հիշում, չեմ հիշում նաև, թե ինչ մեքենաներ էր և ով որ մեքենայի մեջ էր,
- Հիշում եմ որ մեր ավտոյի վարորդի անունը Արմեն էր,
- Ալ. Ցվերիանովը, թե որ ավտոմեքենայի մեջ է եղել և ում հետ, չեմ հիշում,

- Ես և մյուս ընթերական ամեն անգամ պարզ տեսել ենք, որ Ալ. Ցվերիանովը ինքն է ցույց տվել այն տեղերը, որտեղից գողություններ է կատարել, շատ լավ էր պատմում ու ցույց էր տալիս, թե որտեղ ինչ է արել, հաստատ պնդում եմ, որ ոստիկանության աշխատակիցներից որևէ մեկը այդ ընթացքում Ալ. Ցվերիանովին չի օգնել, չի ուղորդել, որ նա այս կամ այն հասցեն ցույց տա կամ որևէ բան ասի.

Մեկնաբանություն:

Մյուս ընթերական՝ Գրիշա Խաչատրյանը հայտնում է, որ ես և մյուս ընթերական շատ մոտիկ չէինք գնում, բայց տեսնում էինք, որ Ալ. Ցվերիանովը ինքն է ձեռքով ցույց տալիս այդ գառաժները, պաղվալները և չեռդակները: Այսպիսով, կա ակնհայտ հակասություն Էմմա Բեգլարյանի և Գրիշա Խաչատրյանի ցուցմունքերի միջև, այն է որ իրենք մոտ չեն գտնվել Ալ. Ցվերիանովին և չեն լսել, թե ոստիկանության աշխատակիցները կարող էին սպառնալ, վախեցնել Ալ. Ցվերիանովին, հատկապես որ նա գտնվել է մյուս մեքենայի մեջ բայց նշում են, որ ոստիկանները չեն հուշել: Քննիչը ակնհայտորեն այսպես կոչված գողությունների վայրերը ցույց տալու վերաբերյալ ցուցմունքերին մոտեցել է ընտրողաբար հիմնավոր է համարում ոստիկանների ցուցմունքերը, որ իրենք ցույց չեն տվել, հիմնավոր է համարում ընթերակաների ցուցմունքերը, ովքեր անմիջականորեն չեն լսել և չեն տեսել, որ ոստիկանները հուշելշն են կամ ուղորդեն, չնայած չէին կարող լսել և անհիմն է համարում Ալ. Ցվերիանովի ցուցմունքը իրեն ուղորդելու մասին:

- Հիշում եմ, որ հետ գալուց ոստիկաններից մեկի ավտոմեքենան փչացավ, թե ինչ եղավ չգիտեմ, դրա համար մեզ տաքսիով ուղարկեցին ոստիկանության բաժին:

Մեկնաբանություն

Այս ցուցմունքը ակնհայտ հակասում է օպեր-լիազորԱրմեն Մկրտչյանի ցուցմունքի հետ, որը նշում է որ քննիչի ավտոմեքենայի անվադողը ծակվելուց հետո Ալ. Ցվերիանովը և Արմանը տեղափոխվում են իր մեքենան ու իր հետ են գնում բաժին: Ստացվում է, որ կամ 2 մեքենա է գնացել տեղազննության կամ բաժին են տեղափոխվել միայն ընթերակաները. Այս հակասությունը ևս պետք է քննության առարկա դառնար, Էմմա Բեգլարյանի և Արմեն Մկրտչյանի, ինչպես նաև տեղազննության մասնակիցների միջև, որը չի կատարվել:

Քննիչը Էմմա Բեգլարյանին տալիս է հարց՝ Ալ. Ցվերիանովի նկատմամբ բռնությունների մասին, հաշվի չառնելով նույնիս որ Է. Բեգլարյանը և մյուս ընթերակա Գրիշա Խաչատրյանը, ովքեր բոլորովին անտեղյակ են եղել Ալ.

Ցվերիանովի հետ կատարվածի մասին Ալ. Ցվերիանովի հետ շփվելու, խոսք փոխանակելու հնարավորություն չեն ունեցել, նպատակ է ունեցել նման հարցադրումների միջոցով ստանալ պատասխաններ, որոնք անտեղյակ մարդու կողմից ոստիկանների կողմից Ալ. Ցվերիանովի նկատմամբ բռնություններ կիրառելու փաստը բացառելու վերաբերյալ պատասխաններ ստանալուն:

- Իմ կողմից արձանագրությունը ստորագրելու ժամանակ քննիչի աշխատասենյակում եղել են նաև այն բոլոր անձինք, որոնց հետ գնացել ենք դեպքի վայրեր, Ալ. Ցվերիանովը մեր ներկայությամբ չի դժգոհել, չի ասել, որ գողություններ չի արել և իրեն ստիպել են, թե ինքը գողություններ չի արել:

Մեկնաբանություն

Քննիչը բացարձակապես ուշադրություն չի դարձրել այն հանգամանքին, որ արձանագրությունը կազմելու և ստորագրելու պահին ներկա են եղել նաև ոստիկանության աշխատակիցները, որը անթույլատրելի է, քննիչը ուշադրություն չի դարձնում այն հանգամանքին, որ Ալ. Ցվերիանովը չէր կարող բողոք ներկայացնել ընթերականերին քննիչների և օպերլիազորների ներկայությամբ այս հանգամանքի վերաբերյալ պարզաբանում ստանալու փորձ չի արվել:

22. 2012թ. դեկտեմբերի 3-ի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը խափանման միջոց կալանավորումը ընտրելու մասին որոշում է կայացնում, որում նշում է, որ Ալ. Ցվերիանովը ձերբակալվել է 30.11.2012թ. ժամը 18:25-ին:

23. Խուզարկություն կատարելու մասին արձանագրությունը կազմվել 30.11.2012 թ. ժամը 23:35-ին ՀՊՎ հերթապահ Արայիկ Նալբանդյանի կողմից:

24. Ձերբակալվածի անհատական քարտում նշված չէ ձերբակալման ժամը:

25. Պահանջագիր կանչի համար թիվ 12/40, Ալ. Ցվերիանովը ՀՊՎ-ից դուրս է եկել 01.12.2012թ. ժամը 11:40-ին և վերադարձվել է 02.12.2012թ. ժամը 01:10-ին, որի ժամանակ չի իրականացվել զննությունը և բացակայում է զննության ենթարկելու մասին արձանագրությունը: Այս հարցը էական նշանակություն ունի, սակայն վարույթն իրականացնող մարմինը չի անդրադարձել:

26. 2014թ. օգոստոսի 20-ին վկա Գևորգ Հակոբյանի՝ Էրբունու բաժնի օպեր գծով բաժնի պետի տեղակալի հարցաքննությունը:

Մենկաբանություն:

Ցուցմունքում նշվում է, որ բաժանմունքի ավագ օպերլիազոր փորձառու աշխատակից Արտավազդ Պետրոսյանը 2012թ. նոյեմբերին օպերատիվ տեղեկություններ ստացավ այն մասին, որ Ալ. Ցվերիանովը՝ ով նախկինում դատված էր և վարձով բնակվում էր նոր Արեշ թաղամասում, Էրեբունու վարչական տարածքում գողություններ է կատարում, իրացնելով իր կողմից ստացված օպերատիվ տեղեկությունները Ա. Պետրոսյանը մյուս ավագ օպերլիազոր Արմեն Մկրտչյանի հետ միասին 2014թ. նոյեմբերի 30-ին ժամը 16.00-ին գողություն կատարելու կասկածանքով ոստիկանության Էրեբունու բաժին բերման ենթարկեցին Ալ. Ցվերիանովին, ում մինչ այդ չեմ ճանաչել.

Մեկնաբանություն

Վարույթն իրականացնող մարմինը ստուգման չի ենթարկել օպերատիվ տվյալների հիմնավորվածությունը և հավասիտությունը Ալ. Ցվերիանովի կողմից գողությունների կատարման վերաբերյալ և կոնկրետը գողություն կատարած դեպքի վայրերի և գողացված իրերի վայրերի վերաբերյալ.

Նոյեմբեր ամսվա որ ժամանակ է ստացվել այդ տեղեկությունները և ինչու հենց նոյեմբերի 30-ին են որոշել բերման ենթարկել և ժամը 16.00-ին, այլ ոչ թե առավոտյան, կամ երեկոյան, երբ անձի տանը գտնվելու հավանականությունը ավելի մեծ է.

27. ՔՀԲ մյուս աշխատակիցներին հանձնարարել եմ հարկ եղած դեպքում օգնել Պետրոսյանին ու Մկրտչյանին քանի որ բերման ենթարկվածին անձնական խուզարկության ենթարկելու համար դրսից ընթերականերին դրսից ընթերականեր հրավիրելու անհրաժեշտություն է առաջանում և այլն, թե կոնկրետ ում եմ նման հանձնարարություն տվել չեմ հիշում.

Մեկնաբանություն

տվյալ ցուցմունքը ակնհայտ հակասության մեջ է գտնվում Արմեն Մկրտչյանի ցուցմունքի հետ, որ անձամբ են խնդրել բաժնի աշխատակիցներին ընթերականեր բերել. Վարույթն իրականացնող մարմինը պարտավոր էր այս հակասությունը ճշտելու համար քայլեր ձեռնարկել՝ առերեսում կազմակերպելով:

- քննիչի հարցին, որ Ալ. Ցվերիանովը բերման է ենթարկվել ոչ թե 16.00-ին այլ առավոտյան 07.30-ի սահմաններում վկա Հակոբյանը չի պատասխանում, ոչ հերքում է, ոչ էլ հաստատում, քննիչը չի փորձում ստանալ իր հարցի պատասխանը.

2014թ. օգոստոսի 20-ին, Ալ. Ցվերիանովի կողմից իր նկատմամբ բռնությունների մասին բողոք ներկայացնելուց հետո մեկ տարի ութ ամիս հետո ՀՔԾ

քննիչը հարցում է ուղարկում Էրեբունու բաժին, ճշտելու համար, թե տվյալ բաժնում որևէ աշխատակցի ռետինե մահակ տրվել է, թե ոչ.

28. 2014թ. օգոստոսի 25-ի Ռոբերտ Թունյանի հարցաքննություն՝

Իմ աշխատասենյակ մտնելու առաջին իսկ պահից տեսա հասկացա, որ Ալ. Ցվերիանովը գտնվում է ալկոհոլի ազդեցության տակ և նման պայմաններում նպատակահարմար չգտա որպես կասկածյալ հարցաքննել նրան:

Մեկնաբանություն:

Կա ակնհայտ հակասություն քննիչի և օպերլիազորների ցուցմունքների միջև Ալ. Ցվերիանովի բացատրություն տալու կարողունակության վերաբերյալ, օպերները գտնում են, որ առանց բժշկական հիմնավորման Ալ. Ցվերիանովը գիտակցում է, թե ինչ է խոսում, քննիչը գտնում էր, որ ոչ: Այս հակասությունը պարզելու ուղղությամբ քննիչը բացարձակ գործողություն չի կատարել, առնվազն առերեսման միջոցով:

- Ալ. Ցվերիանովի վրա ես մարմնական վնասվածք չեմ տեսել
- Մի բան հաստատ կարող եմ ասել, որ Օպ Լ Արտոն մեր համատեղ աշխատանքի ողջ ընթացքում ավտոմեքենա չի ունեցել:

Մեկնաբանություն:

ակնհայտ հակասություն կա քննիչի և ՕԼ Արտավազդի ցուցմունքի միջև, քանի որ քննիչը պնդում է, որ ինքը իր մեքենայով է գնացել քննչական գործողություններին մասնակցելու: Այս հակասությունը մնացել է առանց պարզաբանման.

- 1, 2 տեղում քննչական գործողությունների մասանկիցներից ոմանք ավտոմեքենաների մեձից չեն իջել, այլ այնտեղից են հետևել գործողություններին, եթե դա հարմար է եղել.

Մեկնաբանություն:

Արդյոք 1 կամ 2 դեպք է եղել, որ առանց մեքենայից իջնելու են հետևել գործողությունների կատարմանը, թե շատ են եղել նման դեպքերը, այս հարցը մնացել է առանց պարզաբանման.

- Քննիչը իր ցուցմունքում նշում է, որ Ալ. Ցվերիանովը ունեցել է բողոք դեռևս նախաքննության ընթացքում իր նկատմամբ բռնությունների վերաբերյալ, նույնիսկ թույլ է տվել Ոստիկանության ՆԱ աշխատակցին, որպեսզի բացատրություն վերցնի նրանից:

Մեկնաբանութուն:

ՀՔԾ քննիչը բացարձակ ուշադրություն չի դարձնում Թունյանի ցուցմունքի այս հատվածին, որ ոստիկանության աշխատակիցնորի կողմից բռնությունների փաստով քննություն իրականացնելու հարցով քննություն իրականացնելու իրավասություն ունի ՀԾՔ այլ ոչ փե ՆԱ աշխատակիցը, սույ դեպքում քննիչը ևս կոծկել է ոստիկանության աշխատակիցների գործողությունները և միջոցներ չի ձեռնարկել Ալ. Ցվերիանովի բողոքը ՀՔԾ ներկայացնելու ուղղությամբ.

- ՀՔԾ քննիչ Ավետիսյանի հարցին, որ Ալ. Ցվերիանովը բաժին է բերվել ոչ թե 16.00-ին այլ 07.30-ին, քննիչ Թունյանը չի պատասխանում. Իսկ ՀՔԾ քննիչը այս փաստը անտեսում է.
- Լինում են դեպքեր, որ տեղափոխումը կատարվում է ոչ թե անմիջապես, այլ որոշ ժամանակ հետո, պայմանավորված ՔՀԲ աշխատակիցերի աշխատանքային ծանրաբեռնվածությունից, բայց դա իմ խնդիրը չէ, թե Ալ. Ցվերիանովը քննչական գործողությունների ավարտից հետո որքան ժամանակ է մնացել ոստիկանության Էրեբունու բաժնում, տեղյակ չեմ.

Մեկնաբանություն:

ՀՔԾ քննիչը այս ցուցմունքին ևս որևէ իրավական գնահատական չի տալիս հետագա քննչականա գործողություններում չի փորձում պարզաբանել, թե որտեղ կարող էր գտնվել Ալ. Ցվերիանովը քննչական գործողությունների ավարտից հետո մինչև ՀՊՎ նրան տեղափոխելը.

29. 2012թ: դեկտեմբերի 1-ին քննչական փորձարարություն կատարելու մասին արձանագրություն, սկսվել է 14.30 ավարտվել 19.15 քննիչ Թունյանի մասնակցությամբ, կասկածյալ Ալ. Ցվերիանով, ընթերակա Էմմա Բեգլարյան, ընթերակա Գրիշա Խաչատրյան, պաշտպան Անժելա Հոբոսյան, թարգմանիչ Անահիտ Գրիգորյան

- Ոստիկանության Էրեբունու բաժնի շենքից, ոստիկանության վազ 21 070 մակնիշի մեքենայով շարժվել են 1. Նոր Արեշ 27 փողոց 1-ին հասցեի տունը, 2.Նոր Արեշ 12 փողոց 189 տուն, 3.Մուրացան 192 շենքի մոտ 4. նույն շենքի 3-րդ մուտք 5.նույն շենքի 2-րդ նկուղ, 6, Աճեմյան 31 հասցե 7. Բուռնազյան նրբ: 3 տան դիմաց ավտոտնակ, 8. Բուռնազյան 2-րդ նրբ 2ա տան դիմաց ավտոտնակ, 9, Աճեմյան 30 ավտոտնակ 10, Սարի թաղ 6-3, 11. Վերին Շենգավիթ 2-րդ 20/3 27 բնակարան, 12. Նույն հասցեի 30-րդ բնակարանի չուլան, 13. Անդրանիկ 10/1 շենքի 10-րդ հարկ չուլան 14. Քանաքեռ-Զեյթուն Վարչական շրջան Ռուբինյանց 21 շենք 3-րդ մուտքի նկուղ, 15. Լեքսուսի 6-րդ փողոցի 39 շենքի 3 մուտքի նկուղ, 16. Նույն փողոցի 37 շենքի 3-րդ նկուղ, 17. Նույն փողոցի 33-րդ շենքի 2-րդ մուտքի նկուղ, 18. Նոր-Նորքի զանգված Գյուլիքեցյան 3 նրբ.3 շենք:

Մեկնաբանություն:

Սույն քննչական գործողության ավարտից հետո Ալ. Ցվերիանովը ՁՊՎ է մուտք գործել ժամը 1-ին, որը, այն դեպքում, երբ քննչական փորձարարության էր տարվել ժամը 19.15. Ալ. Ցվերիանովին ՁՊՎ-ից հանել են 11.30 իսկ փորձարարությունը սկսվել է 14.30 հարց է առաջանում, թե Ալ. Ցվերիանովը որտեղ է գտնվել և ինչ է արել 3 ժամ:

30. Երևանի քաղաքապետարանի շտապ բուժօգնության տնօրենի գրությամբ կանչ է գրանցվել 2012թ. դեկտեմբերի 2-ին /էջ 274-275/ հիվանդին այցելել են 21:06 վերադարձել են 21:40 գանգատները նշվել են, բայց գրանցամատյան 6/4 ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության գրառում չկա.

31. 2014թ. սեպտեմբերի 24 վկա Գայանե Հակոբյան ռուսաց լեզվի ուսուցչուհի
Իմ ստորագրությամբ հաստատել եմ, որ ոստիկանը ճիշտ ձևով արձանագրել է այն ամենը, ինչ հայտնել է Ալ. Ցվերիանովը:

32 2014թ. սեպտեմբերի 23 Արայիկ Նալբանդյան, ՁՊՎ հերթապահ ծառայության ավագ տեսուչ

Իմ պրակտիկայում եղել են դեպքեր, որ ձերբակալվածն ինքն է հրաժարվել հիվանդանոց տեղափոխվելուց, այդ դեպքում բժիշկը պահանջել է, որ նա գրավոր հրաժարվի տեղափոխումից, առանց այդ գրավոր հրաժարման բժիշկը չի հրաժարվի նրան բուժհաստատություն տեղափոխելուց, եթե գտնում է դրա անհրաժեշտությունը: Ձերբակալվածի հիվանդանոց տեղափոխվելուց հրաժարվելու մասին նշվում է նաև ՁՊՎ համապատասխան մատյանում.

Մեկնաբանություն

ՁՊՎ մատյանում որևէ գրառում չկա Ալ. Ցվերիանովի հիվանդանոց տեղափոխվելուց հրաժարվելու մասին և ոչ էլ գրառում, այդ մասին հայտնում է Ալ. Ցվերիանովը իր ցուցմունքում, որ դիմել է հիվանդանոցում բուժօգնություն ստանակու հարցով, սակայն մերժվել է: ՀՔԾ քննիչը չի պարզաբանել, թե ինչ պատճառով չի համապատասխան գրառումը կատարվել.

33. 2014թ. Սեպտեմբերի 24 Գայանե Ներսիսյան, ՁՊՎ կրտսեր բուժակ

Հերթապահել է 2012թ. նոյեմբերի 30-ին և դեկտեմբերի 3-ին և հայտնում է, որ եթե ձերբակալվածը ինքն է հրաժարվում հիվանդանոց տեղափոխվելուց, այդ դեպքում բժիշկը ինքն է պահանջում որ ձերբակալվածը ինքը գրի որ հրաժարվում է տեղափոխվել հիվանդանոց.

34. 2014թ: սեպտեմբերի 24 Շենգավիթի բաժնի ՔՀՎ պետ Վարդան Մկրտչյան

Չի ճանաչում Ալ. Ցվերիանովին, չի ճանաչում օպ.լ Ա. Պետրոսյանին և Մկրտչյանին, նշում է, եթե անգամ Շենգավիթի տարածում գողության դեպքի վայրեր է մատնացույց արել Ալ. Ցվերիանովը, ապա դրան մեր բաժնի ոստիկանները չեմ մասնակցել, ես նման տեղեկություն չեմ հիշում որ ստացած լինեմ

Մեկնաբանություն:

Տվյալ տարածքը սպասարկող ոստիկանության բաժնում արձանագրվել են արդյոք Ալ. Ցվերիանովի կողմից մատնանշված գողությունների փաստերը, կամ եթե չեն արձանագրվել ապա այդ գողությունների փաստով տվյալ տարածքը սպասարկող ոստիկանության և Էրեբունու բաժնի ոստիկանության աշխատակիցները քննության ընթացքում եղել է արդյոք տվյալ տարածքը սպասարկող ոստիկանության աշխատակիցներ կողմից, այս ուղղությամբ քննություն չի իրականացվել.

Քննիչի կողմից հարցաքննվում են այն քաղաքացիները, որոնցից իբր գողություններ է կատարել Ալ. Ցվերիանովը և ՀՔԾ քննիչը փորձում է պարզել թե Ալ. Ցվերիանովը իրենցից գողություն կատարելու մասին խոստովանել է բռնությունների արդյունքում, քննիչը այնպիսի հարցադրումներ է կատարում այդ անձանց, ովքեր ներկա չեն եղել ոստիկանների կողմից Ալ. Ցվերիանովի նկատմամբ բռնություն գործադրելիս և չեն կարող ասել, բռնություն եղել է, թե ոչ, ավելի ՀՀ դատարանն է ճանաչել, որ Ալ. Ցվերիանովը այդ գողությունները չի կատարել և ակնհայտ է, որ ցուցմունքը Ցվերյանովը տվել է ճնշման ազդեցության տակ և վկաները, ովեք նշել են որ Ալ. Ցվերիանովն է գողություններ կատարել, նույնպես այդ մասին ցուցմունք են տվել ոստիկանության ճնշման ներքո.

35. 22 նոյեմբերի 2014թ. վկա Արմեն Մկրտչյանի լրացուցիչ հարցաքննություն.

- **Հարց**: Դատաձեռագրաբանական կրկնակի փորձաքննության թիվ 14-2745 եզրակացության համաձայն. Ա.Ալ. Ցվերիանովին անձնական խուզարկության ենթարկելու արձանագրությունում որպես ընթերակա նշված Կարեն Մինասյանի անվան դիմաց առկա ստորագրությունը, հավանաբար կատարվել է Ձեր կողմից, իսկ մյուս փորձագետը կատեգորիկ ձևով հանգել էր եզրակացության, որ Ձեր կողմից է կատարվել ստորագրությունը, ինչ կասեք՞

- **Պատասխան**. երբ նշված անձանց ծանոթացրել եմ խուզարկության արձանագրությանը, հնարավոր է, որ այդ ժամանակ աշխատասեղանիս եղած լինեն իմ ստորագրությամբ տարբեր փաստաթղթեր և միգուցե Կարեն Մինասյան անուն –ազգանունով ներկայացած անձնավորությունը դիտավորյալ կերպով իր ստորագրությունը նմանեցրել է իմ ստորագրությանը, ինչն էլ փորձագետների մոտ կարծիք է ձևավորում, թե իբր ես եմ ստորագրել ընթերակայի դիմաց: Ինձ համար պարզ է, որ ընթերակաները խաբել են իրենց տվյալները, իսկ նրանցից մեկն էլ երևի, ստորագրությունը նմանեցրել է իմ ստորագրությանը:

Մեկնաբանություն

Ուրեմն ՀՀ քաղաքացիներն են միայն խաբողը, իսկ ՀՀ ոստիկանության աշխատակից Արմեն Մկրտչյանը, կամ քննիչ Լուսինե Հարությունյանը՝ ոչ: Ինչպիսի օբյեկտիվություն և պրոֆեսիոնալիզմ....

Դիմող՝ Ալ. Ցվերիանովի ներկայացուցիչ

Արթուր Սաքունց

15.06.2015թ.